

ՊՐՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ  
ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԵԼՈՅԹԸ

ՇԱՄԻՐԱՄ ՍԵԻԱԿԻ  
ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ  
13 ՅՈՒԼԻՍ 2014

Սիրելիներ,

Նախ պէտք է ըսեմ որ Շամիրամ Սեւակ գերմանացի մայր ունենալով հանդերձ գերմաներէն չի գիտեր, որովհետեւ իր գերմանուհի մայրը մէկ բառ անգամ գերմաներէն չէ սորվեցուցած իր զաւակներուն: Չէ ուզած սորվեցնել....:

Պատճառը շատերուն ծանօթ է, բայց տասնամեակներու ընթացքին ո՛չ ոք գնաց ժաննի Սեւակին քով հարցնելու թէ ինչո՞ւ իր երկու զաւակներուն հետ երբեք գերմաներէն չէ խօսած: Ժաննի Սեւակ իր ամուսնոյն Ռուբէն Սեւակի արտորուելէն ետք շուրջ երեք ամիս Պոլիս ապրած է՝ 23 Յունիսէն մինչեւ Սեպտեմբերի 15-ը, եւ այդ ժամանակամիջոցին՝ իբրեւ գերմանացի, ամէն ճիգ ու ջանք ի գործ դրած է տարաբախտ ամուսինը փրկելու համար, նկատի ունենալով որ այդ օրերուն Թուրքիոյ մէջ գերմանացիները պատասխանատու պաշտօններ ունէին եւ թուրքերը անոնց հրահանգները կը գործադրէին....: Եւ ասիկա շատ լաւ հասկցաւ Տիկին Սեւակը:

Արմին Վէկների յուշերուն մէջ ժաննի Սեւակի մասին կը նշուի, թէ՛ գերմանացի այս կնոջ ամուսինը հայ է եւ արտորուած: Այդ խեղճ կինը օրերով գերմանական դեսպանատան առջեւ կը սպասէ, որպէսզի ընդունուի դեսպանին կողմէ....: Կ'ուզեմ խօսիլ նաեւ եոհանէս

Լեփսիոսի մասին, որ պետական արխիվներու մէջ կ'աշխատէր եւ հայկական արխիվները հաւաքագրած եւ ամփոփած է գիրքի մը մէջ: Այս հատորին մէջ (թարգմանուած է նաեւ հայերէնի) Ռուբէն Սեւակին անդրադարձող կարեւոր յիշատակութիւն մը կայ, ուր կ'ըսուի, թէ Ռուբէն Սեւակի կինը եւ կնոջ մայրը Գերմանիոյ դեսպանատան դիմում կատարած են, որպէսզի դեսպանը ազատէ արքորուած Ռուբէն Սեւակը: Այս կապակցութեամբ գոյութիւն ունեցող արխիվները ամփոփուած են Ե.Լեփսիոսի գիրքին մէջ, բացառութեամբ մէկ փաստաթուղթի, ուր Ժաննի Սեւակ եւ մայրը կ'ամբաստանեն գերմանացիները, որոնք չեն կամեցած ազատել Ռուբէն Սեւակը: Այս բաժինը պարզապէս հանուած է Լեփսիոսի գիրքէն: Ես տարիներ ետք ծանօթացայ այս տեղեկութեան, շնորհիւ՝ փրոֆ. Վահագն Տատրեանի, որ Պոննէն ինծի ղրկեց իր ձեռքը անցած այդ կարեւոր փաստաթուղթը:

Ժաննի Սեւակ իր ամբողջ կեանքի ընթացքին աշխատեցաւ՝ իրականութիւնները երեւան հանելու նպատակով, բայց դժբախտաբար մեր առաջնորդ ղեկավարներէն եւ նոյնիսկ մտաւորականներէն ո՛չ ոք հետաքրքրուեցաւ այս հարցով: Պէտք է ըսել թէ Շաւարշ Միսաքեանն ալ - որ Ռուբէն Սեւակի ընկերը եղած էր - հետաքրքրութիւն չցուցաբերեց այս թղթածրարին նկատմամբ:

Ուրիշ կարեւոր նիւթ մը կայ, որուն կ'ուզեմ անպայման անդրադառնալ: Ժաննի Սեւակ Պոլիսէն յետոյ կը հաստատուի Լոզան, ուրկէ նամակ մը կը ղրկէ Պոլսոյ մէջ Գերմանիոյ դեսպանատան հասցէին: Անմիջապէս ըսեմ, թէ այս նամակը բացառիկ կարեւորութիւն ունի: Այդ նամակին մէջ Ռուբէն Սեւակի այրին շատ «քաղաքավարօրէն» կ'ամբաստանէ գերմանացիները, ըսելով՝ «ձեր ունեցած ուժերով գոնէ ազատեցէ՛ք վերջին հայերը, որոնց արիւնը մինչեւ երկինք կը բարձրանայ»: Նամակը գրուած է գերմաներէնով: Այս փաստաթուղթն ալ փրոֆ. Վահագն Տատրեան ինծի ուղարկած է: Ժաննի Սեւակ նամակին մէջ կ'աւելցնէ. «Եթէ չազատէք մնացեալ

հայերը անոնց անէծքները պիտի վերադառնան  
Գերմանիոյ գլխուն»:

Սիրելիներ,

Այդ անէծքը իրականացաւ եւ մինչեւ այսօր ալ  
գերմանացիներուն գլխուն վրայ է՝ հրեաներուն հանդէպ  
կատարած իրենց ահաւոր սպանութիւններուն եւ  
խժոժութիւններուն պատճառով: Ինչպէս քիչ առաջ ըսի,  
մինչեւ օրս դժբախտաբար ո՛չ ոք ակնարկեց ժաննի  
Սեւակի բարձրացուցած աղաղակին: Եւ ասիկա ցաւալի է  
մեր ժողովուրդին համար: Մենք մինչեւ այսօր թուրքերուն  
ետեւէն կը վազենք, բայց բուն յանցաւորները  
գերմանացիներն են եւ անոնց ետեւը թաքնուած  
ուրիշներ:

Յառաջիկայ տարի պիտի յիշատակենք Հայոց  
ցեղասպանութեան 100-ամեակը, բայց տակաւին կը  
շարունակենք նոյն յանկերգը կրկնել...:

Շամիրամ Սեւակը խորհրդանշական կարեւորութիւն ունի  
մեզ համար: Իր մայրը գիտէր բուն  
պատասխանատուներուն «հասցէները» եւ ճիշդ ատոր  
համար ալ իր ամբողջ կեանքի ընթացքին փորձեց  
բացայայտել իրականութիւնները, բայց դժբախտաբար  
կոնակ չունենալով ջաջողեցաւ, իսկ մեր առաջնորդ  
ղեկավարները կամ մտաւորականները թերեւս այս բոլորը  
հասկնալու կարողութիւնը չունէին:

Շամիրամ Սեւակ կատարուած այդ անպատիժ  
յանցանքներուն վկան եւ խորհրդանիշն է:  
Այսօր կը տօնենք Սեւակի դստեր ծննդեան 100-ամեակը եւ  
իր ներկայութիւնը կը վկայէ այդ յանցապարտներուն  
տմարդի արարքներու մասին: Այդ արարքները չենք  
մոռնար երբեք:

Շնորհակալութիւն ձեր բոլորին:

*Համիրամ Սեւակի անուամբ*